

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2024թ. փետրվարի 19-ին, ժամը՝ 12:00-ին Բ.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՅԵՆՈՒՄ, հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2024թ. փետրվարի 16-ին, ժամը՝ 17:00-ին

ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Գետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. սեպտեմբերի 19-ի թիվ 430-Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցները

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/	Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/
1	4	S/Ա՝ Ուազ-396290	ք. Եղվարդ	Վազը՝ 346 750 կմ, շարժիչը՝ չփորձարկված: Թափը՝ առկա է փտած, ժանգոտված տեղեր: Այլ հանգույցներ և դետալներ՝ դեկային մեխանիզմը անսարք, բաժանարար տուփում և կամրջակներում առկա են յուղի արտահոսք: Բացակայում է ՌԻՎՄ-ը, 3 մեղմիչներ: Փոխանցման տուփը չի պահում 1-ին և հետընթացի փոխանցումները:	Թող տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 0905855, թափքի համարը՝ 0033842, հենասարքը՝ 0033179, թափքը՝ սանիտարական	600 000	234 904	11 746	6 323	18 000
2	40	S/Ա՝ Ուազ-3962	ք. Եղվարդ	Վազը՝ 452 810 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափը՝ ենթարկված կոռոզիայի, առկա են փտած տեղեր, հետևի ձախ դուռը ծոված, նստարանները պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը փոխանցումները դուրս է գցում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփին ունի յուղի արտահոսք, դետալները մաշված են, դեկային մեխանիզմում առկա է յուղի արտահոսք, կամրջակների ռետուկտորի ատամնանիվները մաշված, առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները մաշված, ռետորները ամրաններից թուլացած, հովացման ռադիատորը եռակցված: Բացակայում է ՌԻՎՄ-ը, դիմապակին, առջևի շիթը, առջևի լուսարձակները, շարժիչի փոկը, կարբյուրատորը, բենզամոլիչը, էլ. անջատիչները, հետևի ձախ դրան ապակին, դռների բռնակները, կարդան, ֆարկոպ, կողային հայելիները, ռեյները, խցիկի պլաֆոնը, վառելիքի բաքը:	Թող տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 100307, թափքի համարը՝ 0036312, հենասարքը՝ 0035491	600 000	234 904	11 746	6 323	18 000
3	42	S/Ա՝ Զիլ 131 ԿՊ-Ձ	ք. Եղվարդ	Շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք: Թափը՝ ենթարկված կոռոզիայի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների տուփը, բաժանարար տուփը, դեկային մեխանիզմը, կամրջակները չփորձարկված են, ունեն յուղի արտահոսք, դետալները մաշված են: Բացակայում է ՌԻՎՄ-ը:	Թող տարեթիվ՝ 1988թ., շարժիչի համարը՝ 477436, հենասարքը՝ 0869996, թափքը՝ կունգ	850 000	391 505	19 576	10 238	18 000

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ:

* Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:

•Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում, այցելելով վերոնշյալ հասցե, իսկ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ զանգահարել 095-88-07-00 հեռախոսահամարով:

Կազմակերպիչը պարտասխանաբարվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- **նախավճարի վճարումը** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրված լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուրքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:

- **մասնակցության վճարումը** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրված լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուրքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,**

- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,

- հայտարարի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը)։

* Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին պարտավորում է մասնակցի վկայական (տոմս), որի պրամատորում դադարեցվում է աճուրդը սկսելուց անմիջապես երեսուն րոպե առաջ:

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- Աճուրդին կարող են ներկա գրնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուրքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:

- Վճարումը հաստատրող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի փոմսի վճար) և անձնագիրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդիուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատրող փաստաթղթերը**:

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատրող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (փոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- **Աճուրդում գույացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատաբային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (փոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (<< օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:**

- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:

- **Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով**, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման: **Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել:**

*** Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվեփրիոջ հաշվեհամարին:**

*** Համաձայն Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. սեպտեմբերի 19-ի թիվ 430-Ա հրամանի՝**

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

- Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լուրի (լուրերի) գինը:

- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին:

- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու փորքերը:

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լուր (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

*** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ գանգահարել՝ 010-52-63- 32 , 043-06-07-16 հեռախոսահամարներով:**

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը: Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետք՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝ պատժվում է փուզանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ փութությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Պաշարրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով: